

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բժշկագիտության և առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2005թ. մայիսի 3-ին Մինսկ քաղաքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարության միջև: Համաձայնող կողմերը համագործակցում են հետևյալ ոլորտներում՝

- Բնակչության համար բժշկական օգնության կազմակերպում /բժշկական ծառայությունների շուկայի ստեղծում, առաջնային բժշկասանիտարական և մասնագիտացված օգնության զարգացման, նոր բժշկական տեխնոլոգիաների ներդրում/,
- Առողջապահության և բժշկագիտության առաջնային և հրատապ խնդիրներին վերաբերող համատեղ ծրագրերի մշակում և իրականացում,
- Շրջանավարտի, մասնագետի նկատմամբ որակավորման համաձայնեցված պահանջների հիման վրա բժշկական, գիտական, գիտամանկավարժական կադրերի պատրաստում ու որակավորման բարձրացում,
- Բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի պետական գրանցում և սերտիֆիկացում,
- Դեղերի որակի ստուգում և պետական գրանցում,
- Սննդամթերքի պետական հիգիենիկ կարգավորում և գրանցում,
- Քաղաքացիների առողջության պահպանման պահանջներին համապատասխան՝ փորձարարական, կլինիկական և կանխարգելիչ բժշկության բնագավառում հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների զարգացում,
- Առողջապահության և բժշկագիտության էկոնոմիկա,
- Առողջապահության մեջ ավտոմատացված կառավարման համակարգեր, հաշվողական տեխնիկա և համակարգչայնացում,
- Բնակչության հիգիենիկ-համաճարակային բարօրության ապահովման բնագավառում համակարգում